# ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԿԱԶՄԵԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

csodepo ՀԿ զարգացման ծրագիր

ԵՎՐԱՍԻԱ ԶԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Այլընտրանքային Նախագծեր Խումբ

Նախագծի մասին

Օրենսդրական առաջարկներ ներկայացնել, մասնակցել խորհրդարանում մշակվող օրենքների նախագծերին, կազմել լիարժեք օրենսդրական նախագծեր և հետևել, որպեսզի դրանք հասնեն խորհրդարան և մտնեն ԱԺ օրակարգ. այս ամենը թվում է բարդ և հասանելի միայն խորհրդարանականներին ու կառավարությունը։

Ամենևին։ Մենք նախաձեռնել ենք **«Օրենսդրական այլընտրանք»** ծրագիրը, որպեսզի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և անհատներին ներկայացնենք այն բոլոր՝ օրենքով սահմանված ձևերը, որով նրանք կարող են մասնակցել օրինաստեղծ աշխատանքին, աջակցել իրենց հետաքրքրող ոլորտների կատարելագործմանը, օգնել՝ ավելի լավը դարձնել օրենքները, որոնք գործում են բոլորիս համար։

Մեր կայքի (www.altprojects.am) «Օրենսդրական այլընտրանք» բաժնում կարող եք գտնել ծրագրի իրականացման ընթացքում պատրաստված ուսումնական, ճանաչողական նյութերը, հոլովակները, այլ տեղեկատվություն։

Կայքի մեկ այլ բաժնում՝ «Առաջարկների բանկ» հավելվածում, կարող եք ինքներդ գտնել այն հանձնաժողովը, որի ենթակայության տակ գտնվում է այս կամ այն՝ ձեզ հետաքրքրող ոլորտը, և ներկայացնել սեփական ծրագրային առաջարկը։

**Ծրագրի ղեկավար՝ Էլինար Վարդանյան**

*«Այլընտրանքային նախագծեր խումբը» հասարակական կառույց է, որի անդամները մշակում և ներկայացնում են հանրային կյանքի առավել ցավոտ ու կարևոր խնդիրների շուրջ սեփական, այլընտրանքային լուծումները։*

*Սույն ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով, «ՀԿ Դեպո - Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակում։ Ծրագրի շրջանակներում ստեղծված նյութերի բովանդակությունը կամ արտահայտված տեսակետները միմիայն Այլընտրանքային նախագծեր խումբ հասարակական կազմակերպության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները*

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Օրենսդրական նախագիծ կազմելու գործնական հմտություններ

# ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

## ԻՆՉՈՒ ԵՆ ԱՅՍ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

ՔՀԿ-ների գործունեության նպատակը, որպես կանոն, իրենց ոլորտների զարգացումը, կատարելագործումն ու բարելավումն է: Շատ հաճախ այդ ճանապարհին հանդիպում են օրենսդրական խոչընդոտներ, որոնք հնարավոր չէ հաղթահարել անգամ ամենաքրտնաջան և նվիրված աշխատանքի դեպքում: Նման դեպքերում կարիք է առաջանում՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, որոնք կարելի է իրականացնել՝ անգամ չհանդիսանալով օրենսդիր կամ գործադիր մարմնի անդամ:

**Ինչպե՞ս**: Սա այն հարցերից մեկն է, որին մեր ձեռնարկը և դասընթացը պատասխանելու են:

Մենք հաճախ ենք լսում, որ այս կամ այն հասարակական կազմակերպությունը որևէ օրենքում փոփոխություն կատարելու առաջարկով դիմել է խորհրդարանին կամ ներկայացրել է նոր օրենքի նախագիծ:

Ցավոք, այդ առաջարկները, ճնշող մեծամասնությամբ, ունենում են սիրողական փաստաթղթերի տեսք: Այնտեղ կա՛մ ներկայացվում է խնդրի պարզ նկարագրությունը, հղում է արվում այն հարցերին, որոնք ունեն շտկման կարիք, կա՛մ լինում է պարզապես սեփական ցանկությունների և ՀԿ ունեցած դժվարությունների երկար շարադրանքը:

Նման դեպքերում պատգամավորը, որին ներկայացվել է «առաջարկը», ունի մի քանի ճանապարհ՝ վերցնել այդ առաջարկը, վրան անել երկարատև աշխատանք և վերածել այն օրենքի նախագծի, կամ պարզապես մոռանալ այն, կամ լավագույն դեպքում՝ մեկ անգամ խոսել այս թեմայի շուրջ ԱԺ հայտարարությունների ժամին կամ Կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ: Կարծում եմ՝ բոլորին հասկանալի է, որ առաջին ճանապարհով պատգամավորները խիստ հազվադեպ են գնում, քանի որ ունեն սեփական նախագծերը, կամ պարզապես պատրաստ չեն զբաղվել իրենց չառնչվող թեմաներով:

**Ո՞րն է ելքը**: Եթե ՀԿ իրոք կարևորում է օրենսդրական այդ փոփոխությունները, եթե դրանք կարևոր են իր շահառուների, իր ոլորտի զարգացման համար, ապա ՀԿ ներկայացուցիչը կարող է պարզապես ինքը նախապես կազմել գրագետ օրենսդրական առաջարկ, և հենց այն ներկայացնել պատգամավորին կամ խմբակցությանը: Ստանալով արդեն պատրաստի, գրագետ կազմված, հիմնավորված առաջարկ՝ որևէ պատգամավոր կամ խմբակցություն շատ ավելի մեծ պատրաստակամությամբ կզբաղվի դրա առաջխաղացմամբ, և այն կունենա մեծ շանսեր՝ ԱԺ օրակարգ մտնելու և քննարկվելու համար: Իհարկե՝ պայմանով, որ այդ առաջարկը կլինի իրոք արդիական, խելամիտ և գրագետ:

# ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ովքե՞ր ունեն օրենսդրական նախաձեռնության իրավունք

ՀՀ Սահմանադրության[1] համաձայն օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն՝

- պատգամավորը,
- Ազգային ժողովի խմբակցությունը,
- Կառավարությունը,
- ընտրական իրավունք ունեցող առնվազն 50,000 քաղաքացի՝ քաղաքացիական նախաձեռնության միջոցով:

Կա, սակայն, հարցերի խումբ, որոնց շուրջ օրինագծեր կարող է ներկայացնել միայն Կառավարությունը: Այդ հարցերը հետևյալն են՝

- պետական բյուջե[2],
- միջազգային պայմանագրերի վավերացնման, կասեցնման և չեղյալ հայտարարելու առաջարկություն[3],
- համաներում[4],
- վարչատարածքային բաժանում[5],
- նախարարությունների ցանկ և Կառավարության գործունեության կարգ[6],

---

1 Սահմանադրության 190-րդ հոդված:

2 Սահմանադրության110-րդ հոդվածի 1-ին մաս:

3 Սահմանադրության116-րդ հոդվածի 2-րդ մաս:

4 Սահմանադրության117-րդ հոդված:

5 Սահմանադրության 121-րդ հոդված:

6 Սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մաս:

- միջհամայնքային միավորումների ստեղծում՝ հանրային շահերից ելնելով[7],
- օրենքների այլ նախագծեր, որոնք իրավունք ունի ներկայացնել բացառապես Կառավարությունը:

## 1.2 Ո՞վ իրավունք ունի հանդես գալ որպես օրենսդրական նախաձեռնության հեղինակ կամ հիմնական զեկուցող

Օրենքի նախագծի քննարկման ընթացքում նախաձեռնության հեղինակները հանդես են գալիս զեկուցումներով՝ ներկայացնելով իրենց նախագիծը: Որպես օրենսդրական նախաձեռնության հեղինակ կամ հիմնական զեկուցող հանդես գալու իրավունք ունի.

- պատգամավորը՝ իր նախաձեռնության դեպքում,
- օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ պաշտոնական գրությունում նշված պատգամավորը՝ 2 կամ ավելի թվով պատգամավորի նախաձեռնության դեպքում,
- խմբակցության ներկայացուցիչը՝ խմբակցության նախաձեռնության դեպքում,
- Կառավարության ներկայացուցիչը՝ Կառավարության նախաձեռնության դեպքում,
- քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը՝ քաղաքացիական նախաձեռնության դեպքում:

7 Սահմանադրության 189-րդ հոդվածի 1-ին մաս:

## 1.3 Որո՞նք են օրենքի նախագծի հեղինակի իրավունքները

Օրենքի նախագծի հեղինակի իրավունքներն են՝

- օրենքի նախագծի քննարկման ժամանակ հանդես գալ հիմնական զեկուցմամբ, ելույթ ունենալ, պատասխանել հարցերին,
- ընդունել կամ մերժել օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկները,
- լրամշակել օրենքի նախագիծը,
- ցանկացած ժամանակ հետ կանչել օրենքի նախագիծը,
- դուրս գալ նախաձեռնության հեղինակների կազմից:

## 1.4 Ի՞նչ ընթացակարգով է անցնում ԱԺ-ում օրենքի նախագիծը

Բոլոր նախագծերը պետք է նախնական քննարկում անցնեն Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում: Մշտական հանձնաժողովը, որտեղ քննարկվում է նախագիծը, համարվում է Գլխադասային հանձնաժողով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նախագծի քննարկման համար ստեղծվել է ժամանակավոր հանձնաժողով:

Քննարկման նպատակը նախագծերի վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ տալն է[8]:

Հանձնաժողովներում քննարկվելուց և հավանության արժանանալուց հետո նախագծերն ընդգրկվում են Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգում: Հերթական նստաշր-

8 Դասընթացի նյութերին կից տես ԱԺ հանձնաժողովների ցանկը:

ջանի օրակարգում ընդգրկված հարցերը ներառվում են տվյալ նստաշրջանի քառօրյա նիստերի օրակարգում:

Օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է 2 ընթերցմամբ: Նախագծի քննարկումներն Ազգային ժողովում կարելի է պայմանական բաժանել հետևյալ փուլերի.

| | |
|---|---|
| **Առաջին փուլ** | շրջանառության մեջ դրված նախագծի վերաբերյալ պատգամավորները ներկայացնում են գրավոր առաջարկներ **ԱԺ Աշխատակազմ** |
| **Երկրորդ փուլ** | առաջին ընթերցումից առաջ նախագիծը նախնական քննարկում է անցնում **գլխադասային հանձնաժողովում** |
| **Երրորդ փուլ** | Ազգային ժողովի նիստում նախագիծը քննարկվում է **առաջին ընթերցմամբ,** տեղի է ունենում նախագծի քվեարկություն |
| **Չորրորդ փուլ** | **առաջին ընթերցմամբ** ընդունված նախագծի վերաբերյալ պատգամավորները գրավոր առաջարկներ են ներկայացնում |
| **Հինգերորդ փուլ** | երկրորդ ընթերցումից առաջ նախագիծը կրկին քննարկվում է **գլխադասային հանձնաժողովում** |
| **Վեցերորդ փուլ** | **Ազգային ժողովի նիստում նախագիծը քննարկվում է երկրորդ ընթերցմամբ, տեղի է ունենում նախագծի քվեարկություն** |

Օրենքի նախագծի նախնական քննարկումն իրականացնում է գլխադասային հանձնաժողովը, սակայն, որևէ այլ մշտական հանձնաժողովի կամ Ազգային ժողովի խորհրդի (Խորհուրդ) առաջարկությամբ այդ քննարկումը կարող են իրականացնել նաև մյուս մշտական հանձնաժողովները: Խորհուրդը կազմված է

- Ազգային ժողովի նախագահից,
- ԱԺ նախագահի 3 տեղակալներից,
- խմբակցությունների մեկական ներկայացուցիչներից,
- մշտական հանձնաժողովների նախագահներից:

## 1.5 Ինչ գործառույթներ է իրականացնում Գլխադասային հանձնաժողովը ԱԺ-ում օրենքի նախագծի քննարկման ընթացքում

Գլխադասային հանձնաժողովը՝

- նախագծի առաջին և երկրորդ ընթերցումից առաջ Ազգային ժողով ներկայացնում է եզրակացություն, որի հիման վրա նախագիծն ընդգրկվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգի նախագծում,
- կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել ԱԺ որոշման նախագիծ՝ տվյալ հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին:

Եթե հարցի քննարկման սկզբում հիմնական զեկուցողը բացակայում է, ապա քննարկումը մեկ անգամ հետաձգվում է՝ առանց քվեարկության: Եթե քննարկումը հետաձգվելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում հիմնական զեկուցողը հանձնաժողովի նախա-

գահին ուղղված գրավոր դիմումով հարցի քննարկմանը կրկին չի ներկայանում, ապա այն շրջանառությունից հանվում է:

Լինում է, որ գլխադասային գլխադասային հանձնաժողովի անդամներից ոմանք ունենում են հատուկ կարծիք՝ հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ: Եթե այդպիսիք կազմում են հանձնաժողովի անդամների թվի առնվազն ¼-ը, ապա նրանց ներկայացուցիչը կարող է Ազգային ժողովում հարցի քննարկման ընթացքում հանդես գալ հարակից զեկուցմամբ՝ ներկայացնելով այդ հատուկ կարծիքը:

Գլխադասային հանձնաժողովից բացի, մյուս մշտական հանձնաժողովները կարող են իրենց գրավոր եզրակացությունները ներկայացնել Ազգային ժողով՝ մինչև հարցի քննարկման սկսվելը: Այդ դեպքում այլ մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը նույնպես իրավունք ունի գլխադասային հանձնաժողովում, ինչպես նաև՝ արդեն Ազգային ժողովում նախագծի քննարկման ընթացքում հանդես գալու հարակից զեկուցմամբ:

Գլխադասային հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո Ազգային ժողովի նախագահը հարցն ընդգրկում է հերթական նստաշրջանի օրակարգի (կամ՝ օրակարգում լրացումներ կատարելու մասին նախագծի) համապատասխան բաժնում:

### 1.6 Ինչպե՞ս է կատարվում ԱԺ-ում օրենքների քվեարկությունը

Սահմանադրական օրենքները, այն է՝

- Ազգային ժողովի կանոնակարգը,
- Ընտրական օրենսգիրքը,

- Դատական օրենսգիրքը,
- Սահմանադրական դատարանի մասին օրենքը,
- Հանրաքվեի մասին օրենքը,
- Կուսակցությունների մասին օրենքը,
- Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը

ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն **3/5-ով**:

Սահմանադրույթամբ նախատեսված հետևյալ հարցերին վերաբերող օրենքներն ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի **ձայների մեծամասնությամբ՝**

- օրենքի նախագծով (Կառավարության եզրակացության համաձայն) պետական բյուջեի եկամուտների էական նվազեցնում կամ պետության ծախսերի ավելացնում[9],
- միջազգային պայմանագրերի վավերացում, կասեցում և չեղյալ հայտարարում[10],
- համաներում[11],
- ռազմական դրության ռեժիմի սահմանում[12],
- արտակարգ դրության ռեժիմի սահմանում[13],
- ինքնավար մարմինների ստեղծում[14]:

Մյուս բոլոր օրենքներն ընդունվում են քվեարկությանը մաս-

---

9 Սահմանադրության 109-րդ հոդվածի 3-րդ մաս:

10 Սահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ մաս:

11 Սահմանադրության117-րդ հոդված:

12 Սահմանադրության 119-րդ հոդվածի 4-րդ մաս:

13 Սահմանադրության 120-րդ հոդվածի 4-րդ մաս:

14 Սահմանադրության 122-րդ հոդվածի 1-ին մաս:

նակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

Տեղեկատվական Համակարգում Համակարգը (ՀԻՏՀ) (Armenian Legal Information System (ARLIS), որը հասանելի է հետևյալ հղումով: Ազգային ժողովի նախագահն ընդունված օրենքը 1 շաբաթվա ընթացքում ուղարկում է Հանրապետության նախագահին, որը ստանալուց հետո՝ 21-օրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը 5-օրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Եթե Հանրապետության նախագահը չի տվյալ պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը 5-օրյա ժամկետում ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Հայաստանում ընդունված բոլոր օրենքները հրապարակվում են նաև առցանց՝ Հայաստանի Իրավական

# ԱԺ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

## 2.1 Ինչ նպատակով են ստեղծվում ԱԺ մշտական հանձնաժողովները

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները ստեղծվում են.

- Օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման,
- դրանց վերաբերյալ խորհրդարանին եզրակացություններ ներկայացնելու,
- խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար:

Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով[15]:

## 2.2 Որո՞նք են ԱԺ մշտական հանձնաժողովների իրավասությունները

Մշտական հանձնաժողովն իր իրավասության շրջանակում՝

- իրականացնում է գլխադասային հանձնաժողովի լիազորությունները,
- իրականացնում է խորհրդարանական վերահսկողություն ,
- պաշտոններում ընտրության կամ նշանակման համար Ազգային ժողովին առաջարկում է թեկնածուներ,
- կարող է հարցումներով դիմել պետական և տեղական ինք-

15 Սահմանադրության 106-րդ հոդված

նակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց,
- կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ,
- կարող է ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր:

## 2.3 Որո՞նք են ԱԺ մշտական հանձնաժողովները

Ներկայիս խորհրդարանում գործող մշտական հանձնաժողովները և նրանց իրավասության տակ գտնվող հարցերը հետևյալն են.

• **Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով.** առողջապահություն, մայրություն, մանկություն, սոցիալական ապահովություն, հաշմանդամության հիմնահարցեր, աշխատանք, զբաղվածություն, ժողովրդագրություն

- **Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով.** միջազգային հարաբերություններ, միջխորհրդարանական կապեր, միջխորհրդարանական բարեկամական խմբեր, հայրենադարձություն, սփյուռքի հետ կապեր
- **Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով.** գիտություն, կրթություն, մշակույթ, երիտասարդություն, սպորտ, տեղեկատվություն, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն
- **Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով.** Եվրոպական միության և Եվրախորհրդի հետ կապեր, Հայաստանի Հանրապետության օրենքների և եվրոպական օրենսդրության ներդաշնակեցում
- **Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով.** պաշտպանություն, ազգային անվ-

տանգություն, ոստիկանություն, արտակարգ իրավիճակներ, ռազմարդյունաբերական համալիր, զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայություն

- **Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողով.** սահմանադրական փոփոխություններ, ընտրական համակարգ, հանրաքվե, սահմանադրական դատարան, արդարադատություն, հանրային ծառայություն, դատարանակազմություն, դատախազություն, քաղաքացիական, քրեական, վարչական օրենսդրություն, Ազգային ժողովի կանոնակարգ, մարդու իրավունքների պաշտպանություն, երեխայի իրավունքներ, փաստաբանություն, նոտարիատ, կուսակցություններ, հասարակական միավորումներ, կրոն, կանանց և տղամարդկանց իրավահավասարություն, ազգային փոքրամասնություններ, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկա, դատական ակտերի հարկադիր կատարում, քրեակատարողական ծառայություն
- **Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով.** տարածքային կառավարում, վարչատարածքային բաժանում, տեղական ինքնակառավարում, տարածքային զարգացում, համայնքային ծառայություն, տեղական հարկեր, տուրքեր և վճարներ, գյուղատնտեսություն, բնության պահպանություն
- **Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.** հարկեր, տուրքեր, վճարներ, արդյունաբերություն, քաղաքաշի-

նություն, էներգետիկա, բնական պաշարներ, տրանսպորտ, կապ, հեռահաղորդակցություն, ինտերնետ (համացանց), արտադրական ենթակառուցվածքի այլ ճյուղեր, զբոսաշրջություն, առևտուր և ծառայություններ, ձեռնարկատիրական գործունեություն, պետական գույքի կառավարում, սակագներ, տնտեսական մրցակցություն, հակամենաշնորհ

- **Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով.** բյուջետային օրենսդրություն, պետական բյուջե, փոխառություններ, վարկեր, դրամ, դրամաշրջանառություն, աուդիտ, հաշվեքննություն, բանկային համակարգ, ֆինանսական (դրամական, կապիտալի, վարկային, ապահովագրական և արժեթղթերի) շուկաներ

# ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾԸՆԹԱՑ

## 3.1 Ինչպե՞ս են ստեղծվում օրենքի նախագծերը

Իրավաստեղծ գործընթացն այն ամբողջական շղթան է, որի ընթացքում օրենքը պարզապես գաղափարից կամ լավ առաջարկից սկսվելով՝ անցնում է նախագիծ դառնալու փուլը և հասնում ԱԺ՝ քվեարկության:

Իրավական ցանկացած ակտի որակը մեծապես կախված է նրանից, թե նախագծի մշակման ընթացքում ինչպիսի՞ համագործակցություն է եղել իրավական ակտի նախագիծը մշակողի և շահագրգիռ այլ մարմինների միջև:

Նորմատիվ իրավական ակտերի մշակումը, հատկապես՝ օրենսդրական ակտերի պարագայում, որպես կանոն իրականացվում է երկու փուլով.

- քաղաքականության մշակում
- իրավական ակտի տեքստի կազմում

***Փուլ առաջին.***

Այն իրենից ներկայացնում է որոշման կայացման փուլ, որի ընթացքում նախագծի հեղինակը պետք է որոշում կայացնի հետևյալ առանցքային հարցերի շուրջ.

- ո՞րն է լուծման ենթակա օրակարգի էությունը, և որո՞նք են դրա լուծմանն ուղղված քաղաքականության նպատակները,

այլ կերպ ասած՝ ինչու՞ է այս օրենքի նախագիծը կարևոր և ինչ հարցեր է այն լուծելու,

- ինչպիսի՞ այլընտրանքներ կան այդ օրակարգի լուծման հարցում, և դրանցից ո՞րն է առավել նախընտրելին,
- արդյո՞ք օրակարգի լուծման համար ընտրված քաղաքականությունն իրականացնելու միակ միջոցը նորմատիվ իրավական կարգավորումն է, թե՞ կան այլընտրանքային ուղիներ:

***Փուլ երկրորդ.***

Եթե որոշվում է, որ տվյալ հարցին պետք է տրվի նորմատիվ իրավական կարգավորում, ուրեմն պետք է փնտրել ուղիներ՝ օրենսդրական կարգավորման համար: Ենթադրվում է, որ առաջին փուլի ընթացքում արդեն ուսումնասիրել եք տվյալ թեմայի շրջանակներում ՀՀ-ում գործող օրենսդրական դաշտը՝ ներառյալ օրենսդրական և նորմատիվ ակտերը: Հետևաբար՝ արդեն գիտեք, թե օրենսդրական ո՛ր բացերը կամ թերությունները լրացնելուն կամ շտկելուն է ուղղված լինելու Ձեր առաջարկը: Հաշվի առնելով այդ ամենը՝ սկսեք ի մի բերել Ձեր առաջարկներն արդեն գրավոր տեսքով և որոշեք, թե ո՛ր մարմինն է առավել նպատակահարմար՝ տվյալ նախաձեռնությունը ներկայացնելու համար.

## 3.2 Ինչպե՞ս վարվել. տարբերակներ

**Տարբերակ 1.** Կազմում եք գրավոր առաջարկություն և ներկայացնում կառավարություն:

**Տարբերակ 2.** Առաջարկներն ուղարկում եք ԱԺ՝ կամ համապատասխան հանձնաժողով, կամ որևէ խմբակցություն, կամ առանձին պատգամավորի, կամ բոլորին միասին:

**Տարբերակ 3.** ԱԺ ներկայացնում եք օրենսդրական գրագետ մշակված առաջարկ:

Եթե որոշում եք գրել օրենսդրական առաջարկ, ապա հաշվի առեք մի շարք կարևոր նյուանսներ: Բացի գրագետ, ճիշտ հիմնավորված, ամբողջական օրենսդրական նախագիծ գրելը, պետք է նախապես ճիշտ ընտրել «թիրախ» պատգամավորին կամ խմբակցությանը: Այս մասին առավել մանրամասն՝ ձեռնարկի եզրափակիչ մասում:

### 3.3 Ինչ է նորմատիվ իրավական ակտը

Նորմատիվ իրավական ակտը գրավոր իրավական ակտ է, որը.

- պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար
- ընդունվում է Հայաստանի Հանրապետության ժողովրդի կողմից կամ
- ընդունվում է Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից[16]:

  Նորմատիվ իրավական ակտի տեսակ է օրենսդրական ակտը, որն ընդգրկում է
- Սահմանադրությունը,

16 Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենք 2-րդ հոդված

- Սահմանադրական օրենքները,
- Օրենքները:

Օրենքները նորմատիվ իրավական ակտեր են, որոնք.

- Ընդունվում են Ազգային ժողովի կողմից կամ ժողովրդի կողմից՝ հանրաքվեի միջոցով, պարունակում են վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

**Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին**[17]:

## 3.4 Ինչպիսի՞ն է օրենքի վերնագիրը

Օրենքի նախագծի անվանումը պարունակում է.

«Հայաստանի Հանրապետության օրենքը» բառերը, իրավական ակտի բովանդակության և կարգավորման առարկայի հակիրճ նկարագրությունն արտահայտող վերնագիր:

Օրենքի վերնագիրը պետք է լինի հնարավորինս պարզ, հակիրճ և արտացոլի օրենքի հիմնական բովանդակությունը:

Օրենքի վերնագիրը գրվում է մեծատառերով, իսկ վերնագրի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում:

Օրենքի վերնագիրը չպետք է կրկնի գործող իրավական ակտերի վերնագրերը:

Օրենքի նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում պետք է գրվի «ՆԱԽԱԳԻԾ» բառը:

---

17 Սահմանադրության 5-րդ հոդված, 3-րդ կետ

### 3.4 Ինչպիսի՞ կառուցվածք ունի օրենքը

Ծավալուն օրենքներում համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում, համասեռ գլուխները՝ բաժիններում, իսկ բաժինները՝ մասերում: Անհրաժեշտության դեպքում բաժինները կարող են բաժանվել ենթաբաժինների՝ միավորելով առանձին գլուխներ:




Օրենքի բաժիններն ու գլուխներն ունեն վերնագրեր: Օրենքի հոդվածները պետք է ունենան վերնագրեր, բացառությամբ՝ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:

Հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը: Հոդվածների վերնագրերի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում: Հոդվածի մասերը, կետերը և ենթակետերը վերնագրեր չեն ունենում:

Վերնագիրը պետք է լինի համառոտ և արտահայտի համապատասխան մասում, բաժնում, գլխում տեղ գտած համասեռ նորմերի ընդհանրացված բովանդակությունը:

Մասերի, բաժինների, գլուխների վերնագրերը գրվում են մեծատառերով, իսկ հոդվածների վերնագրերը՝ փոքրատառերով:

Բաժինները և գլուխները համարակալվում են արաբական թվանշաններով:

Հոդվածները համարակալվում են արաբական թվանշաններով:

ՕՐԻՆԱԿ՝

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ*

*Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք*

*(Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին)*

*Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Մ Ա Ս*

*Բ Ա Ժ Ի Ն 1*

*ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔ*

*Գ Լ Ո Ւ Խ 1*

*ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ*

***Հոդված 1.*** *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը*

***Հոդված 2.*** *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրները*

### 3.5 Որո՞նք են հոդվածի բաղկացուցիչ մասերը

Հոդվածն օրենքի հիմնական կառուցվածքային միավորն է: Հոդվածը կարող է պարունակել մեկ կամ մի քանի կապակցված միտք: Ըստ այդմ՝ հոդվածը կարող է բաղկացած լինել մի քանի մասից, հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:




Հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը:

Հոդվածի մասերը, կետերը և ենթակետերը վերնագիր չեն ունենում:

Հոդվածի յուրաքանչյուր մաս համարակալվում է արաբական թվանշաններով, որոնք միջակետով սահմանազատվում են տեքստից:

Հոդվածի կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք փակագծով սահմանազատվում են տեքստից:

Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հոդվածի համակարգն ունի ստորև ներկայացվող տեսքը.

**Հոդված 6.** Հանրակրթության պետական չափորոշիչը

1. Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի՝
   1) ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները.
   2) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների.
   3) հենքային ուսումնական պլանը և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները.
   4) սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:
2. Հանրակրթության պետական չափորոշչի պահանջները պարտադիր են կրթական ծրագրերի և ուսումնական հաստատությունների համար:

Օրենքի կառուցվածքը պետք է լինի կուռ՝ տրամաբանորեն միասնական, հաջորդական ու համակարգված:

### 3.6 Ինչպիսի՞ն է օրենքի դրույթների հաջորդականությունը

Կախված կարգավորման ենթակա հարցերի շրջանակից՝ օրենքի դրույթների տրամաբանական հաջորդականությունը, որպես կանոն, ունի հետևյալ տեսքը.

| |
|---|
| **Նախաբան** |
| **Կարգավորման առարկա** |
| **Գործողության ոլորտ** |
| **Հասկացությունների սահմանում** |

| |
|---|
| **Նյութահիրավական կարգավորումներ** |
| **Ընթացակարգային դրույթներ և ընդդատության հարցեր** |
| **Պատասխանատվություն և սանկցիաներ սահմանող նորմեր** |
| **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** |

- **Հավելվածներ.** Օրենքը կարող է ունենալ առանձին բաղկացուցիչ մասեր՝ հավելվածների ձևով: Օրենքի բաղկացուցիչ հանդիսացող՝ մեկից ավելի հավելվածները պետք է համարակալվեն: Իրավական ակտի համապատասխան մասերը պետք է հղում պարունակեն այդ հավելվածներին՝ նշելով հավելվածի համարը:

- **Օրենքի նախաբանը**. Օրենքը կարող է ունենալ նախաբան (պրեամբուլա), որում հակիրճ սահմանվում են օրենքի ընդունման նպատակները և դրդապատճառները:

Նախաբանը հանրության համար պարզաբանում է օրենքի ընդունման նպատակը, դրա հիմնական առաքելությունը, այն նկատառումները, որոնցով պայմանավորված է օրենքի ընդունումը:

Նախաբանը չի շարադրվում առանձին հոդվածով, չի համարակալվում և չի բաժանվում հոդվածների (կետերի):

Նախաբանում նորմատիվ դրույթներ և իրավական կարգավորումներ չեն կարող զետեղվել:

Եթե օրենքն ընդունվում է՝ ի կատարում կամ համաձայն նույն

կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի կամ դրա մասի (այդպիսին կարող է լինել ՀՀ Սահմանադրության որևէ հոդված, ՀՀ կողմից վավերացված միջազգային որևէ համաձայնագիր և այլն), օրենքի նախաբանում հղում է կատարվում այդ իրավական ակտին՝ նշելով դրա կրճատ անվանումը և համապատասխան մասը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրական պրակտիկայում ընդունված է որպես նախաբան ընկալել նաև օրենքի կարգավորման առարկան կամ գործողության ոլորտն ամրագրող նորմերը: Սակայն այդ նորմերն ինքնին չեն կարող համարվել նախաբան, քանի որ լիարժեքորեն չեն արտացոլում նախաբանի էությունը և չունեն դրան բնորոշ գաղափարական նշանակությունը, այնպես որ նախաբանի առկայությունը, հատկապես խոշոր օրենսդրական նախաձեռնությունների պարագայում, ցանկալի է:

- **Օրենքի կարգավորման առարկան**. Օրենքը կարող է ունենալ կարգավորման առարկայի վերաբերյալ առանձին հոդված, որում սահմանվում է օրենքով կարգավորվող հարցերի և հարաբերությունների շրջանակը:

Օրենքի կարգավորման առարկային վերաբերող առանձին հոդվածի նախատեսումը ոչ միշտ է անհրաժեշտ: Կարգավորման առարկային վերաբերող նորմի առկայությունը նպատակահարմար է այն դեպքերում, երբ օրենքի կարգավորման առարկայի բարդության պատճառով վերնագիրը լիարժեքորեն չի արտացոլում կարգավորման առարկայի ամփոփ բովանդակությունը, կամ ցանկալի է հեշտացնել այդ ակտից օգտվելը՝ սահմանելով օրեն-

քով կարգավորվող հարաբերությունների որոշակի շրջանակ:

Կարգավորման առարկայի սահմանումը պարզապես վերնագրի վերարտադրությունը չէ. այն պետք է պատկերացում տա՝ օրենքով կարգավորվող հարաբերությունների և հարցերի առանցքային ոլորտների մասին: Միևնույն ժամանակ՝ այն չպետք է մանրամասնի օրենքի յուրաքանչյուր բաժնի կամ գլխի բովանդակությունը:

Կարգավորման առարկայի հոդվածը պետք է լինի հնարավորինս հակիրճ, առանց բարդ նախադասությունների և տերմինների կիրառման:

ՕՐԻՆԱԿ՝

*Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան*

*Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է հանրակրթության գործընթացին մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված բոլորի համար հավասար կրթության իրավունքի, անվճար պարտադիր միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը:*

- **Օրենքի գործողության ոլորտին** վերաբերող նորմը սահմանում է հասարակական հարաբերությունների և սուբյեկտների այն շրջանակը, որոնց վրա տարածվելու է

օրենքի գործողությունը, կամ որոնք դուրս են մնում օրենքի կարգավորման շրջանակներից:

- **Օրենքին բնորոշ հասկացությունները.** Եթե օրենքում կիրառվում են նոր, բազմիմաստ կամ մասնագիտական հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ օրենքով պետք է տրվեն դրանց սահմանումները: Հասկացությունները պետք է սահմանվեն պարզ և մատչելի՝ դրանց միատեսակ ընկալումն ապահովելու համար: Հասկացությունները, որպես կանոն, սահմանվում են առանձին հոդվածում՝ այբբենական հաջորդականությամբ:

ՕՐԻՆԱԿ՝

*Հոդված 3. Հիմնական հասկացությունները*

*1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.*

*1)* **հանրակրթություն՝** *անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ կրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերով.*

*2)* **տարրական կրթություն՝** *պարտադիր կրթության առաջին մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանը.*

*3)* **հիմնական կրթություն՝** *պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները.*

*4)* **միջնակարգ կրթություն՝** *հանրակրթության երրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները.*

*5)* **հանրակրթության պետական չափորոշիչ՝** *նորմատիվ փաստաթուղթ, որը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, կրթական ծրագրի առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների՝ շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը.*

Եթե միևնույն հասկացությունը կամ տերմինը մեկից ավելի անգամ է կիրառվում օրենքի տեքստում, այն պետք է սահմանվի միայն մեկ անգամ՝ հասկացությունների սահմանմանը վերաբերող հոդվածում:

ՕՐԻՆԱԿ՝

*երբ հասկացությունը միայն մեկ անգամ է կիրառվում օրենքում և օրենքում այլ հասկացություններ սահմանված չեն, հետևաբար, մեկ հասկացություն սահմանող առանձին հոդվածի առկայությունը նպատակահարմար չէ:*

Հասկացությունը **չպետք է սահմանվի՝** օգտագործելով այդ նույն հասկացությունը կամ դրանից կազմված բառերը:

Չի թույլատրվում իրավական ակտով տալ հասկացության սահմանում, եթե այդ հասկացությունը չի գործածվելու տվյալ իրավական ակտում:

**Միևնույն հասկացությունը չի կարող տարբեր կերպ սահմանվել** տարբեր օրենքներում, հատկապես, եթե դրանք միևնույն ոլորտի կարգավորմանը վերաբերող օրենքներ են: Բացառություն կարող է լինել այն դեպքը, երբ տվյալ օրենքի համատեքստից ելնելով՝ որևէ հասկացություն պետք է այլ կերպ՝ առավել նեղ կամ լայն իմաստով սահմանվի:

- **Օրենքի նորմերի խախտման համար պատասխանատվությունը.** Պատասխանատվություն սահմանող նորմը պետք է հստակ մատնանշի այն կոնկրետ արարքները կամ օրենքի այն կոնկրետ նորմը, որոնց խախտումն առաջացնում է պատասխանատվություն: Ավելին, պետք է հստակ նշվի պատասխանատվության տեսակը՝ քրեական, վարչական կամ կարգապահական: Եթե օրենքի խախտումն առաջացնում է քրեական կամ վարչական պատասխանատվություն, ապա

օրենքում հղում է կատարվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքին, որոնք սահմանում են վարչական կամ քրեական իրավախախտումների շրջանակը:

ՕՐԻՆԱԿ՝

*Սույն օրենքի այլ պահանջների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:*

Նման անորոշ սահմանումներ **չպետք է կիրառվեն**: Այս օրինակում նշված չեն ո՛չ պատասխանատվության տեսակը, ո՛չ արարքները, որոնց համար պատասխանատվություն է սահմանվում:

Եթե օրենքի խախտումն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն, ապա այն պետք է սահմանվի տվյալ օրենքում՝ հստակ նշելով պատասխանատվություն առաջացնող արարքը և պատասխանատվության կոնկրետ միջոցը կամ այն օրենքի նորմը, որով սահմանվում է արարքի համար նախատեսված պատասխանատվությունը:

- **Օրենքի՝ ուժի մեջ մտնելու ժամկետները.** Եթե օրենքում նախատեսված չէ ուժի մեջ մտնելու ժամկետ, ապա այն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող **տասներորդ օրը**: Սակայն իրավական հստակության տեսանկյունից ուժի մեջ մտնելը միշտ անհրաժեշտ է հատուկ կարգավորել: Ընդ որում՝ նաև այն դեպքերում, երբ

օրենքն ուժի մեջ պետք է մտնի դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Օրենքում կարող է նախատեսվել ուժի մեջ մտնելու այլ ժամկետ: Օրենքներն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան՝ դրանց պաշտոնական հրապարակմանը **հաջորդող օրվանից**, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտը ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

Օրենքում պարտավոր են նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու՝ ավելի ուշ ողջամիտ ժամկետ, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը՝ իր վարքագիծը համապատասխանեցնել սահմանված պահանջներին կամ եթե սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:

Օրենքում կարող է սահմանվել նորմատիվ իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, հոդվածների մասերի, կետերի, ենթակետերի և նախադասությունների համար ուժի մեջ մտնելու այլ ժամկետներ, քան նախատեսված է տվյալ օրենքի՝ ուժի մեջ մտնելու համար:

- **Եզրափակիչ և անցումային դրույթները**. Օրենքը պետք է պարունակի եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝

1) օրենքի՝ ուժի մեջ մտնելու ժամկետները
2) գործողության ժամկետները, երբ օրենքը կամ դրա առանձին մասը նախատեսված է սահմանափակ ժամկետով գործողության համար (ժամանակավոր ակտ կամ ժամանակավոր դրույթ): Այս դեպքում պետք է նշվի ակտի կամ դրա առանձին մասի գործողության հստակ ժամկետը:

Օրենքը պետք է պարունակի **անցումային դրույթներ,** եթե՝

- օրենքը լրիվ գործողության մեջ դնելու համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, կամ
- որոշակի ժամկետների (սահմանափակ ժամանակահատվածի) կամ օրենքի հիմնական մասում սահմանված պայմանների համար անհրաժեշտ է սահմանել հիմնական մասում սահմանված նորմերից տարբերվող այլ նորմեր, կամ
- նորմատիվ իրավական ակտի՝ հիմնական մասով սահմանված նորմերի ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ է սահմանել, ըստ որոշակի անձանց շրջանակի կամ տարածքի, ակտի՝ հիմնական մասով սահմանված նորմերի գործողության համար այլ նորմեր: (Օրինակ՝ Սահմանադրության անցումային դրույթներում սահմանվեց, որ ՄԻՊ մասին օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը):

Օրենքը պետք է պարունակի անցումային դրույթներ, եթե անձի իրավական վիճակը բարելավող նորմատիվ իրավական ակտին նախատեսվում է տալ հետադարձ ուժ կամ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ տալու համար անհրաժեշտ է սահմանել համապատասխան նորմեր: Այս դեպքում անցումային դրույթներով սահմանվում են

- օրենքը կամ դրա այն մասերը, որոնց տրվում է հետադարձ ուժ.
- հետադարձ ուժ տալու իրավակարգավորումների (ժամկետների, պայմանների, անձանց շրջանակի և այլն) համար անհրաժեշտ համապատասխան նորմեր: Օրենքի եզրափակիչ մասը և անցումային դրույթները կարող են շարադրվել կա՛մ առանձին գլուխների, կա՛մ հոդվածների, կա՛մ կետերի ձևով՝ տվյալ օրենքով սահմանված կարգով:

## 3.7 Ինչպիսի՞ ընդհանուր կանոններ են գործում օրենքում փոփոխություններ, լրացումներ կատարելու, իրավական ակտի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում

Իրավական ակտում ցանկացած **փոփոխություն կամ լրացում** պետք է լինի հստակ: Եթե իրավական ակտում կատարվող փոփոխությունները կամ լրացումները ծավալուն են, ապա կարող է նպատակահարմար լինել՝ իրավական ակտն ամբողջությամբ շարադրել նոր խմբագրությամբ, կամ ուժը կորցրած ճանաչել և ընդունել նորը[18]:

**Փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտերը չեն կարող փոփոխվել կամ լրացվել: Փոփոխությունները կամ լրացումները կատարվում են միայն հիմնական ակտում:**

Իրավական ակտում փոփոխությունները, լրացումները կատարում կամ ուժը կորցրած է ճանաչում միայն այդ իրավական

18 Նորմատիկով իրավական ակտերի մասին օրենքի 8-րդ գլուխ

ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը. օրենքի պարագայում՝ Ազգային ժողովը, Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման պարագայում՝ Կառավարությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման պարագայում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը և այլն:

Նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: Օրենսգրքերում փոփոխություն կամ լրացում կատարվում է օրենքով:

ՕՐԻՆԱԿ՝

*ՆԱԽԱԳԻԾ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ՕՐԵՆՔԸ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ*
*ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ*
*ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Նախագիծ մշակող մարմինը պետք է ձգտի նույն իրավական ակտում կատարվող բոլոր փոփոխությունները և լրացումները հնարավորինս միավորել **մեկ նախագծում**:

Նույն օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող **նախագծերի միացումը** հնարավորություն է տալիս խուսափել օրենքում միմյանց հակասող փոփոխություններ և լրացումներ նախատեսելուց:

Իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին ցանկացած նախագիծ մշակելիս անհրաժեշտ է մանրակրկիտ ստուգել, թե գործող նորմատիվ իրավական ակտի որ դրույթներն են կորցրել իրենց արդիականությունը կամ պարզեցման կարիք ունեն: Դա հնարավորություն է տալիս զերծ մնալ նորմատիվ իրավական ակտերում հետագայում նաև այլ փոփոխություններ կամ լրացումներ կատարելուց:

Իրավական ակտում փոփոխությունները կատարվում են առանձին՝

- բառեր, թվեր կամ կետադրական նշանները այլ բառերով, թվերով, կամ կետադրական նշաններով **փոխարինելու** միջոցով,
- բառեր, թվեր կամ նախադասություններ **հանելու** միջոցով,
- բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ **նոր խմբագրությամբ** շարադրելու միջոցով,
- բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների գործողությունը **դադարեցնելու** միջոցով:

Նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարվում են դրանում ավելացնելով.

- նոր բաժիններ,
- գլուխներ,
- հոդվածներ,
- մասեր,

- կետեր,
- ենթակետեր,
- պարբերություններ,
- նախադասություններ,
- բառեր,
- թվեր,
- կետադրական նշաններ:

Իրավական ակտում փոփոխությունների կամ լրացումների հաջորդականությունը համապատասխանում է հիմնական իրավական ակտի հոդվածների հաջորդականությանը՝ անկախ առանձին փոփոխությունների կարևորության աստիճանից:

Իրավական ակտում փոփոխությունը, լրացումը կամ գործողությունը դադարեցնելը ձևակերպվում է հետևյալ արտահայտություններով.

- **փոխարինել՝** բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոխարինելու դեպքում,
- **հանել՝** բառերը, թվերը, կամ նախադասությունները հանելու դեպքում,
- **շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու դեպքում,
- **դադարեցնել գործողությունը՝** բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի կամ կետերի գործողությունը դադարեցնելու դեպքում,
- **լրացնել հետևյալ բովանդակությամբ՝** նոր բաժիններ,

գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ լրացնելու դեպքում,

- **լրացնել՝** առանձին բառեր կամ թվեր լրացնելու դեպքում:

Իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կատարելիս պետք է հստակ նշվի իրավական ակտի այն հոդվածը, դրա մասը, կետը, ենթակետը, պարբերությունը և նախադասությունը, որտեղ նախատեսվում է փոփոխությունը կամ լրացումը:

Եթե փոփոխություններ և լրացումներ են կատարվում իրավական ակտի միևնույն կառուցվածքային միավորի (Օրինակ՝ հոդվածի) տարբեր մասերում, ապա իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ նախատեսող համապատասխան կառուցվածքային միավորը բաժանվում է կետերի՝ օրենքների պարագայում, իսկ այլ իրավական ակտերի պարագայում՝ ենթակետերի:

ՕՐԻՆԱԿ՝

*Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածի՝*

*1) 3-րդ մասում «11» թիվը փոխարինել «13» թվով,*

*2) 4-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետում «օրենքով սահմանված» բառերը փոխարինել «օրենսդրությամբ սահմանված» բառերով:*

Եթե փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում իրավական ակտի տարբեր կառուցվածքային միավորներում (Օրինակ՝ հոդվածներում), ապա դրանք նախատեսվում են փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին՝ իրավական ակտի առանձին կառուցվածքային միավորներով:

ՕՐԻՆԱԿ՝

*Հոդված 1. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «11» թիվը փոխարինել «13» թվով:*

*Հոդված 2. Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի 1-ին ենթակետում «օրենքով սահմանված» բառերը փոխարինել «օրենսդրությամբ սահմանված» բառերով:*

Նորմատիվ իրավական ակտի **գործողությունը դադարեցվում է** հետևյալ դեպքերում՝

- նորմատիվ իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում,
- նորմատիվ իրավական ակտն անվավեր է ճանաչվում:

Եթե նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցվելու է դրանով կարգավորվող հարաբերությունների միայն որոշակի մասով (որը հնարավոր չէ առանձնացնել ակտի մասերի ձևով), ապա այդ ակտի գործողությունը մասնակիորեն է դադարեցվում: Այս դեպքում նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում պետք է հստակ նշվի այն հարաբերությունների շրջանակը, որոնց մասով դադարեցվում է ակտի գործողությունը:

Գործողության դադարեցման արդյունքում դադարեցվում են նաև այն բոլոր իրավական ակտերը, որոնցով այդ «մայր» ակտում փոփոխություններ և լրացումներ էին կատարվել:

Օրենքի մասի գործողության դադարեցումը չի հանգեցնում այդ

օրենքի կամ դրա այլ մասերի գործողության դադարեցման, բացառությամբ այն դեպքի, եթե օրենքում առկա է այդ՝ դադարեցված մասով հաստատված հավելված:

### 3.8 Ինչպես են վերնագրվում Օրենքներում փոփոխություններ, լրացումներ կատարելու և օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին նախագծերը

Օրենքում փոփոխություն կամ լրացում կատարելու մասին օրենքի նախագծի վերնագրում նշվում են.

- փոփոխվող օրենքի կրճատ անվանումը,
- համապատասխանաբար, «փոփոխություն կատարելու մասին», «լրացում կատարելու մասին», կամ «փոփոխություն և լրացում կատարելու մասին» բառերը:

ՕՐԻՆԱԿ 1

*ՆԱԽԱԳԻԾ*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ՕՐԵՆՔԸ*

*«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ*

*ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

ՕՐԻՆԱԿ 2

*ՆԱԽԱԳԻԾ*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ՕՐԵՆՔԸ*

*«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

ՕՐԻՆԱԿ 3

*ՆԱԽԱԳԻԾ*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ՕՐԵՆՔԸ*

*«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

### 3.9 Ինչպե՞ս ձևակերպել օրենքում բառերը կամ թվերն այլ բառերով կամ թվերով փոխարինումը

Օրենքի նորմում բառերը կամ թվերն այլ բառերով կամ թվերով փոխարինելու դեպքում հետևյալ հաջորդականությամբ նշվում են.

- «օրենքի» բառը,
- օրենքի այն հոդվածը, անհրաժեշտության դեպքում՝ նաև

հոդվածի մասը, կետը, ենթակետը, պարբերությունը կամ նախադասությունը, որտեղ նախատեսվում է կատարել փոփոխությունը,

- փոփոխվող բառերը կամ թվերը՝ չակերտների մեջ,
- համապատասխանաբար «բառերը (բառը) փոխարինել» կամ «թվերը (թիվը) փոխարինել» բառերը,
- այն բառերը կամ թվերը, որոնք պետք է փոխարինեն գործող ակտի համապատասխան բառերին կամ թվերին՝ չակերտների մեջ,
- «բառերով (բառով)» կամ «թվերով (թվով)» բառերը:

Եթե փոփոխության ենթակա կառուցվածքային միավորում առանձին բառեր կամ թվեր հանդիպում են մի քանի անգամ, ապա անհրաժեշտ է միանշանակ նշել, թե կոնկրետ ո՛ր բառերը կամ թվերը պետք է փոփոխվեն: Այդ նպատակով՝ չակերտների մեջ գրվում են փոփոխվող բառերից կամ թվերից առաջ գրված բառերը կամ բառը՝ նշելով, որ փոփոխությունը կատարվում է այդ բառերից հետո հանդիպող համապատասխան բառերում կամ թվերում:

ՕՐԻՆԱԿ՝

*Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «ապագայում կառուցվող» բառերից հետո «ձեռնարկությունների» բառը փոխարինել «իրավաբանական անձանց» բառերով:*

Եթե փոփոխություններ են կատարվում միևնույն մասում, կետում, ենթակետում, ապա նախադասության մեջ փոփոխությունը ձևակերպվում է մեկ նորմով:

ՕՐԻՆԱԿ՝

*Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «13» թիվը փոխարինել «15» թվով, իսկ «օրենքով սահմանված» բառերը փոխարինել «օրենսդրությամբ սահմանված» բառերով:*

Եթե իրավական ակտի մի քանի հոդվածներում կատարվում է միևնույն փոփոխությունը կամ փոփոխության են ենթարկվում միևնույն բառի տարբեր հոլովաձևերը, այն ձևակերպվում է մեկ նորմով:

ՕՐԻՆԱԿ 1

*Օրենքի 15-րդ, 20-րդ, 24-րդ հոդվածներում «իրավաբանական օգնություն» բառերը փոխարինել «փաստաբանական ծառայություն» բառերով:*

ՕՐԻՆԱԿ 2

*Օրենսգրքի 15-րդ գլխում, 35-րդ և 44-րդ հոդվածներում «Վերահսկիչ պալատ» բառերը և դրա հոլովաձևերը փոխարինել «Հաշվեքննիչ պալատ» բառերով և դրա հոլովաձևերով:*

### 3.10 Ինչպե՞ս օրենքի որևէ հատված ձևակերպել նոր խմբագրությամբ

Օրենքում բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու դեպքում հետևյալ հաջորդականությամբ նշվում են.

- «օրենքի» բառը,
- օրենքի այն բաժինը, գլուխը, հոդվածը, հոդվածի մասը, կետը, ենթակետը կամ նախադասությունը, որը նախատեսվում է շարադրել նոր խմբագրությամբ,
- «շարադրել հետևյալ խմբագրությամբ.» բառերը և միջակետ՝ «.» կետադրական նշանը,
- հաջորդ տողում՝ չակերտների մեջ, տրվում է համապատասխան բաժնի, գլխի, հոդվածի, հոդվածի մասի, կետի, ենթակետի կամ նախադասության նոր խմբագրությամբ շարադրանքը:

Ընդ որում, նոր խմբագրությամբ շարադրելիս նշվում է նաև հոդվածի համարակալումը:

ՕՐԻՆԱԿ՝

*Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

*«7. Պարզաբանում տված իրավասու մարմինը իրավունք ունի հետ կանչել պաշտոնական պարզաբանումը և այն փոխարինել նոր պարզաբանմամբ, եթե տեղի է ունեցել հանգամանքների էական փոփոխություն:»:*

### 3.11 Ինչպես ձևակերպել Օրենքում կատարվելիք լրացումները

Օրենքում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ լրացնելու դեպքում հետևյալ հաջորդականությամբ նշվում են.

- «օրենքը» բառը,
- «լրացնել հետևյալ բովանդակությամբ» բառերը,

- համապատասխան բաժնի, գլխի, հոդվածի համարակալման հերթական համարը և համապատասխանաբար «բաժնով», «գլխով», «հոդվածով» բառերը,
- նոր տողից՝ չակերտների մեջ, գրվում է լրացվող բաժնի, գլխի, հոդվածի համարակալման հերթական համարը, համապատասխանաբար «բաժին», «գլուխ», «հոդված» բառերը, համապատասխան լրացվող բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը (եթե տվյալ հոդվածն ունի վերնագիր) և լրացման տեքստը:

Օրենքում հոդվածների մասեր, կետեր, ենթակետեր կամ նախադասություններ լրացնելու դեպքում հետևյալ հաջորդականությամբ նշվում են.

- «օրենքի» բառը,
- օրենքի այն հոդվածը, անհրաժեշտության դեպքում հոդվածի մասը, կետը կամ ենթակետը՝ ներգոյական հոլովով, որտեղ նախատեսվում է կատարել լրացումը,
- «լրացնել հետևյալ բովանդակությամբ» բառերը,
- նոր տողից՝ չակերտների մեջ գրվում է հոդվածի լրացվող մասի, կետի կամ ենթակետի հերթական համարը և լրացվող տեքստը, իսկ նոր նախադասություն լրացնելու դեպքում՝ միայն լրացվող տեքստը:

ՕՐԻՆԱԿ՝

*Հոդված ... Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.*

*«2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաեւ սույն մասի 1-ին եւ 2-րդ կետերում նշված այն անձանց, որոնք դատախազի կամ հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակվել են մինչեւ 2017 թվականի հունիսի 1-ը՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո:»*

## 3.12 Ինչպիսի՞ ընթացակարգեր են գործում իրավական ակտերի նախագծերի մշակման համար

Նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից: Նորմատիվ իրավական ակտի չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող՝ այլ նորմատիվ իրավական ակտերին:

Նորմատիվ իրավական ակտերը շարադրվում են պետական լեզվով՝ հայերենով: Օտարերկրյա կազմակերպությունների անվանումները, ֆիզիկական անձանց անունները, աշխարհագրական օբյեկտների անունները, դրանց հապավումները, ինչպես

նաև թարգմանության ոչ ենթակա իրավական, ֆինանսական, տեխնիկական և այլ տերմինները պետք է գրվեն հայերեն տառադարձությամբ, Օրինակ՝ Հյուման ռայթս վոտչ: Անհրաժեշտության դեպքերում հայերեն հապավումների կամ տերմինների հետ միաժամանակ՝ փակագծերում, կարող են կիրառվել ընդունված լատիներեն կամ օտարալեզու հապավումներ կամ տերմիններ: Վերջիններս կիրառվում են հայերեն հապավումների կամ տերմինների հետ միաժամանակ՝ փակագծերում:

ՕՐԻՆԱԿ՝

*Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր իրավական ուժը կարող է կորցնել այդ իրավական ակտի ընդունման պահից, իսկ այն դեպքում, երբ անվավերության հիմքն առաջացել է նորմատիվ իրավական ակտն ընդունելուց հետո, ապա՝ անվավերության հիմքի առաջացման պահից (ex tunc)՝ հանրային շահերի պաշտպանությունից ելնելով՝ անվավեր ճանաչելու մասին ակտում ուղղակիորեն նախատեսելու դեպքում:*

Միջազգային կազմակերպությունների անվանումները գրվում են հայերեն՝ անհրաժեշտության դեպքում փակագծերում նշելով դրանց՝ միջազգային ճանաչում ստացած կամ ընդունված լատիներեն կամ անգլերեն հապավումները: Օրինակ՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Համաշխարհային բանկ (WB), Առևտրի համաշխարհային կազմակերպություն (WTO), Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն (USAID): Նորմատիվ իրա-

վական ակտերով սահմանվող ձեւաթղթերը կարող են շարադրվել օտար լեզվով կամ հայերենով՝ օտար լեզվի զուգորդմամբ:

Նորմատիվ իրավական ակտի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: Իրավական ակտի դրույթները պետք է լինեն դյուրըմբռնելի, ոչ երկիմաստ, հակիրճ, առանց ավելորդ տարրերի, ճշգրիտ, ընթերցողի համար անորոշության տպավորություն չստեղծող:

Նորմատիվ իրավական ակտում միտքը պետք է արտահայտվի հնարավորինս պարզ բառերով:

Նորմատիվ իրավական ակտում պետք է պահպանվեն հայոց լեզվի կանոնները, այդ թվում՝ կետադրության կանոնները: Չպետք է անհարկի օգտագործել օտար բառեր, եթե գոյություն ունի դրանց գրական հայերեն տարբերակը:

Նոմատիվ իրավական ակտերում չպետք է օգտագործվեն հնացած բառեր ու արտահայտություններ:

Նորմատիվ իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաճանոթ հասկացություններ կամ տերմիններ: Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ (եզրույթներ), որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն

ընկալվում, կամ՝ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով պետք է տրվեն այդ ակտի էությունից բխող՝ դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որպեսզի ապահովվի դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը:

Եթե բառն իրավական իմաստը տարբերվում է առօրյա խոսակցական կամ տեխնիկական լեզվում իր ունեցած իմաստից, ապա արտահայտությունը պետք է այնպես ձևակերպվի, որ բացառվի ցանկացած անորոշություն:

ՕՐԻՆԱԿ՝

*գիշերային ժամ, փիրապետել, հայտնաբերել, կենդանի և այլ բառերի իրավական իմաստը տարբերվում է դրանց առօրյա խոսակցական լեզվում ընդունված իմաստից:*

Եթե իրավական նորմում թվարկվում է երկու պայման կամ դրույթ, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր է իրավական նորմի կիրառման համար, ապա դրանք միանում են «և» կամ «ու» շաղկապով:

ՕՐԻՆԱԿ՝

*Հայցվորը կարող է մեկից ավելի պահանջներ միավորել մեկ հայցում, եթե դրանք ուղղված են միևնույն պատասխանողի դեմ և փոխկապակցված են:*

Եթե իրավական նորմում թվարկվում է երկուսից ավելի պայման կամ դրույթ, որոնց բոլորի միաժամանակյա առկայությունը պարտադիր է իրավական նորմի կիրառման համար, ապա՝

- դրանք միմյանցից բաժանվում են ստորակետերով, իսկ վերջին պայմանից կամ դրույթից առաջ գրվում է «և» կամ «ու» շաղկապը, կամ
- բոլոր համարակալված պայմանները կամ դրույթները միմյանցից տարանջատվում են միայն ստորակետով:

ՕՐԻՆԱԿ 1

*Պետական հաշվառման համար անհատ ձեռնարկատերը ներկայացնում է հաշվառման մասին դիմում, անձնագրի պատճենը, լուսանկար և պետական տուրքի վճարման անդորրագիրը:*

ՕՐԻՆԱԿ 2

*հաշվառման համար անհատ ձեռնարկատերը պետք է ներկայացնի՝*

*1) հաշվառման մասին դիմում,*
*2) անձնագրի պատճենը,*
*3) լուսանկար,*
*4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:*

Եթե իրավական նորմի կիրառման համար բավական է թվարկվող երկու պայմաններից կամ դրույթներից մեկի առկայությունը, ապա այդ պայմանները կամ դրույթները բաժանվում են «կամ» շաղկապով:

ՕՐԻՆԱԿ՝

*Անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ:*

Եթե իրավական նորմի կիրառման համար բավական է թվարկվող երկուսից ավելի պայմաններից կամ դրույթներից որևէ մեկի առկայությունը, ապա այդ պայմանները կամ դրույթները միմյանցից տարանջատվում են ստորակետերով, իսկ վերջին պայմանից առաջ գրվում է «կամ» շաղկապը:

ՕՐԻՆԱԿ՝

*Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:*

Եթե նորմում թվարկվում են միմյանց հետ չփոխկապակցված պայմաններ կամ դրույթներ, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր չէ նորմի կիրառման համար, այդ պայմանները կամ դրույթները միմյանցից տարանջատվում են միջակետով:

ՕՐԻՆԱԿ՝

*1. Քրեական գործով վարույթն ավարտվում է՝*

*1) քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով.*

*2) գործով դատավճիռը կամ այլ վերջնական որոշումն ուժի մեջ մտնելով, եթե այն չի պահանջում դրա կատարման համար հատուկ միջոցների ձեռնարկում.*

*3) գործով դատավճիռը կամ այլ վերջնական որոշումն ի կատար ածելու մասին հաստատում ստանալով, եթե այն պահանջում է դրա կատարման համար հատուկ միջոցների ձեռնարկում:*

Պետք է խուսափել «և/կամ» արտահայտության կիրառումից, քանի որ այն չափազանց անորոշ է:

Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ:

Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ այդ իրավական ակտի բովանդակությունից ուղղակի այլ բան չի բխում:

### 3.13 Ինչպե՞ս ձևակերպել պարտականությունները

Իրավական նորմի տեքստից պետք է հստակորեն և միանշանակ երևա, որ պահանջվում է որոշակի պարտադիր վարքագիծ:

Եթե բայի միայն սահմանական ներկա եղանակով իմպերատիվ պահանջների ձևակերպումը չի ապահովում դրա իմպերատիվ բնույթի հարցում բավարար հստակություն, ապա խորհուրդ է տրվում օգտագործել պարտականության ձևակերպումն արտահայտող և նորմի հրամայական բնույթն ընդգծող բառեր, Օրինակ՝ «պարտավոր է», «պետք է», «անհրաժեշտ է» և այլն:

ՕՐԻՆԱԿ 1

*Վկան ներկայանում է դատարան դատարանի կանչով:*

ՕՐԻՆԱԿ 2

*Այլ անձի ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործող անձը պարտավոր է ֆիրմային անվանման իրավատիրոջ պահանջով դադարեցնել դրա օգտագործումը և հատուցել պատճառված վնասները:*

Իրավական ակտը պետք է բաղկացած լինի տրամաբանական հաջորդականությամբ սահմանված դրույթներից՝ իրավական ակտի հստակությունն ու մատչելիությունն ապահովելու համար:

Իրավական ակտում ընդհանուր կանոնը պետք է նախորդի հատուկ կանոնին:

Միմյանց հաջորդող գործողություններ սահմանելիս դրանք պետք է շարադրվեն ըստ ժամանակագրական հաջորդականության, որպեսզի պարզ լինի դրանց կատարման հերթականությունը:

Իրավական ակտի դրույթները պետք է լինեն հնարավորինս համառոտ, իսկ դրանց բովանդակությունը՝ համասեռ: Անհրաժեշտ է խուսափել չափազանց երկար նորմերից և անտեղի բարդ ձևակերպումներից:

Իրավական ակտում չպետք է լինեն իրավական նորմերի անհիմն կրկնություններ և ներքին հակասություններ:

Իրավական ակտերը պետք է համահունչ լինեն նաև այլ իրավական ակտերին: Մասնավորապես, անհրաժեշտ է խուսափել տարբեր իրավական ակտերում, ինչպես նաև նույն մարմնի ընդունած նույն տեսակի նորմատիվ իրավական ակտերում պարունակվող նորմատիվ դրույթները կրկնելուց:

Իրավական ակտերում չպետք է լինեն հակասական կարգավորումներ:

Մեկ նախադասությունը պետք է մի միտք արտահայտի: Մի գլխավոր ու մի քանի երկրորդական նախադասություններից բաղկացած երկար նախադասությունները ճիշտ կլինի բաժանել մի քանի պարզ նախադասությունների:

ՍԽԱԼ ՕՐԻՆԱԿ՝

*Եթե աշխատողը չի ծանուցել գործատուին որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին և պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը դուրս չի եկել աշխատանքի, ապա պայմանագիրը համարվում է լուծված, և գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ այդպիսի պահանջ ներկայացվելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:*

ՃԻՇՏ ՕՐԻՆԱԿ՝

*Եթե աշխատողը չի ծանուցել գործատուին որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին և պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը դուրս չի եկել աշխատանքի, ապա պայմանագիրը համարվում է լուծված: Այդ դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ՝ այդպիսի պահանջ ներկայացվելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:*

Քանի որ երկար պարբերությունները դժվարընթեռնելի և դժվարընկալելի են, հոդվածի բովանդակությունը պետք է բաժանվի համապատասխան մասերի (կետերի, ենթակետերի)՝ մտքի տրամաբանական զարգացմանը համապատասխան: Սակայն դա չի նշանակում, որ նախադասությունները պետք է արհեստականորեն և անհարկի մասնատվեն:

Նախադասության տարբեր մասերի միջև քերականական կապը պետք է հստակ լինի: Պետք է պարզ լինի՝ ենթական վերաբերում է գլխավո՞ր նախադասության բային, թե՞ ստորադաս:

Նախադասությունների կառուցվածքին վերաբերող վերոհիշյալ կանոնների պահպանումը անհրաժեշտ է պարզ կառուցվածքով հոդվածներ ունենալու և դրանց կիրառումը, ինչպես նաև հոդվածում հետագա փոփոխությունների և լրացումների կատարումը հեշտացնելու համար:

Նորմատիվ իրավական ակտում չպետք է տեղ գտնեն նորմեր, որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:

Եթե օրենքի նորմը սահմանում է պարտադիր պահանջ, ապա օրենքում պետք է նախատեսվեն դրա խախտման համար իրավական հետևանքներ:

Այն դեպքում, երբ միտքը կարող է արտահայտվել և՛ հաստատական, և՛ ժխտական եղանակով, նպատակահարմար է կիրառել հաստատական եղանակը:

ՍԽԱԼ ՕՐԻՆԱԿ՝

*Ապահովագրության պայմանագիրը չի տարածվում ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետից առաջ և հետո տեղի ունեցած ապահովագրական դեպքերի վրա:*

ՃԻՇՏ ՕՐԻՆԱԿ՝

*Ապահովագրության պայմանագիրը տարածվում է միայն ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական դեպքերի վրա:*

Անհրաժեշտ է խուսափել դերանունների կիրառումից այն դեպքում, երբ դրանք կարող են վերաբերել նույն նախադասության մեջ առկա մի քանի բառի: Այդ դեպքում դերանվան փոխարեն պետք է կրկնել նույն բառը:

Հապավումներն ու կրճատումները նվազեցնում են իրավական ակտի հստակությունն ու ընկալելիությունը: Արգելվում է նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև՝ բառերի կամ տերմինների հապավումներ:

Առանձին դեպքերում, սակայն, կրճատումների և հապավումների կիրառումը կարող է արդարացված լինել գործնական անհրաժեշտությամբ՝ իրավական ակտի տեքստում հաճախակի կիրառվող երկար և մի քանի բաղադրիչ ունեցող արտահայտությունների, միջազգային պայմանագրերի, փաստաթղթերի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումների կրկնության անհարմարություններից խուսափելու համար: Այս դեպքում արտահայտությունն առաջին անգամ կիրառելիս փակագծերում տրվում է ակտում կիրառվող դրա կրճատ տարբերակը՝ «(ստորև կամ այսուհետ՝ ...)» ձևով:

ՕՐԻՆԱԿ 1

*Ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է...:*

ՕՐԻՆԱԿ 2

*Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա (այսուհետ՝ ՄԻԵԿ):*

Արգելվում են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների անվանումների կրճատումները, բացառությամբ՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսվածների:

Կրճատումները և հապավումները թույլատրելի են աղյուսակներում և սխեմաներում:

Նորմատիվ իրավական ակտում կիրառվող ամսաթվերում տարեթիվը եւ ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը՝ տառերով: «Թվական» բառը եւ դրա հոլովաձեւերը գրվում են ամբողջությամբ:

Նորմատիվ իրավական ակտում ժամկետ սահմանելիս անհրաժեշտ է հստակ նշել ժամկետի սկիզբն ու ավարտը: Եթե ժամկետը նշված է ամսաթվերով, ժամկետի վերջին օրը ևս պետք է հաշվարկվի այդ ժամկետում: Եթե իրավական ակտում սահմանված ժամկետի հաշվարկը պետք է կատարվի ոչ թե ըստ օրացուցային օրերի, այլ՝ աշխատանքային օրերով, ապա դա պետք է հատուկ նշվի:

ՕՐԻՆԱԿ՝

*Եթե 3 աշխատանքային օրվա ընթացքում կոլեկտիվ աշխատանքային վեճի կողմերը ձեռք չեն բերում համաձայնություն միջնորդի թեկնածության վերաբերյալ, ապա բանակցությունները համարվում են ավարտված, իսկ կոլեկտիվ աշխատանքային վեճը՝ չլուծված:*

Ժամերը գրվում են թվերով՝ 24-ժամյա ռեժիմով:

Ժամերը նշելիս ժամը և րոպեն արտահայտող թվերի միջեւ դրվում է երկու կետ, իսկ դրանցից առաջ նշվում է «ժամը» բառը:

## 3.14 Ինչ է Նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորումը, և ինչպես այն ձևակերպել

Նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորման ճիշտ կառուցվածքը և բովանդակությունն առանցքային նշանակութ-

յուն ունեն, քանի որ հիմնավորման միջոցով նախագիծը մշակողը պարզաբանում է.

- իրավական ակտի ընդունման նպատակը,
- կարգավորման անհրաժեշտությունը,
- կարգավորման համար ընտրված եղանակի նպատակահարմարությունը,
- նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը, իրավական ակտի ընդունմամբ ակնկալվող արդյունքները:

Հիմնավորումը շարադրվում է պատմողական նախադասությունների միջոցով, որոնք պետք է լինեն պարզ արտահայտված, առանց երկիմաստ մտքերի, փոխաբերական արտահայտությունների:

Նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորումը կազմվում է հետևյալ բովանդակությամբ.

## 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Այս մասում, ըստ հնարավորության, նկարագրվում են այն հանգամանքները, որոնք պայմանավորում են իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, այլ օրենքների և իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և այլ միջազգային փաստաթղթերի (հանձնարարական, խարտիա, դիրեկտիվ

և այլն) նորմերը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան որոշումները,

- գործող օրենսդրական դաշտը, առկա իրավական կարգավորումները, իրավական ակտում նախկինում կատարված փոփոխությունների, լրացումների և դրանց արդյունքների համեմատական վերլուծությունը՝ ըստ վերաբերելիության, եթե դրանք թույլ են տալիս ընդգծել նախագծով առաջարկվող իրավական կարգավորումների էությունը,
- կարգավորման ենթակա հարաբերությունների ոլորտում գործնականում առկա խնդիրները, հնարավոր օրենսդրական բացերը, դատական պրակտիկայի միասնականացման խնդիրները,
- տվյալ բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը:

Ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրներն արտացոլելու և նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորելու համար կարող են ներկայացվել նաև վիճակագրական տվյալներ, սոցիոլոգիական և այլ հետազոտությունների արդյունքներ:

## 2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Այս մասում նկարագրվում են.

- նախագծի կարգավորման առարկայի վերաբերյալ առկա միջազգային փորձը և դրա ընտրության հիմնավորումը, եթե դա նշանակություն ունի նախագծով առաջարկվող կարգավորումների ներկայացման տեսանկյունից: Ընդ որում, մի-

ջազգային փորձի վերլուծությունը պետք է ներկայացվի համամասնորեն՝ Եվրոպական միության անդամ, Եվրոպայի Խորհրդի անդամ, ԱՊՀ անդամ և անգլոսաքսոնական իրավական համակարգին պատկանող երկրների օրինակներով՝ համեմատության օբյեկտիվ և համոզիչ բազա ապահովելու համար,

- իրավական ակտի կարգավորման ազդեցության գնահատման արդյունքները՝ հակիրճ, եթե համապատասխան տեսակի իրավական ակտի համար «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված է ազդեցության գնահատման պահանջ,
- կարգավորման հնարավոր այլընտրանքային մոտեցումները և առկա այլընտրանքներից նախագծով առաջարկվող կարգավորումն ընտրելու հիմնավորումը,
- նախագծով առաջարկվող իրավական կարգավորումների բովանդակությունը, այն խնդիրները, որոնց լուծմանն ուղղված է նախագծով առաջարկվող իրավական կարգավորումը:

Եթե Հայաստանի Հանրապետությունը համապատասխան ոլորտում ստանձնել է Եվրոպական Միության դիրեկտիվներին մոտարկման պարտավորություններ, ապա հիմնավորման մեջ նշվում է նաև նախագծի՝ դրանց համապատասխանության մասին:

Անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել նաև տեղեկատվություն այն նյութերի վերաբերյալ, որոնցից օգտվելով մշակվել է նախագիծը:

## 3. Ակնկալվող արդյունքը

Այս հատվածում հիմնական կետերով նշվում են այն բարելավումները, արդյունքները, որոնք ակնկալվում են իրավական ակտի ընդունման արդյունքում:

ՕՐԻՆԱԿ՝

*ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ*

*Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը. միջազգային փորձ*

*Հարևանային հարաբերությունների բնագավառում առկա են բազմաթիվ վեճեր, խախտումներ և անորոշ իրավիճակներ, որոնք արդարադատության լավագույն շահերից ելնելով պահանջում են հստակ կարգավորումներ, ինչին էլ ուղղված է սույն կոնցեպցիայի մեջ տեղ գտած իրավունքի ինստիտուտի՝ հարևանային իրավունքի ներդրումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մեջ:*

*Արտասահմանյան քաղաքացիաիրավական բազմաթիվ կոդիֆիկացիաներում առկա է հարևանների իրավունքների կագավորմանն ուղղված նորմ, համաձայն որի՝ «հարևանները պետք է հանդուրժեն մյուս հարևանների կողմից պատճառվող սովորական անհանգստությունները, որոնք չեն գերազանցում հանդուրժողականության պատշաճ*

*սահմանները՝ կախված նրանց կողմից փիրապետվող անշարժ գույքերի բնույթից, տեղակայումից կամ տեղական սովորույթներից:*

*Գերմանական իրավունքում առկա է հետևյալ սկզբունքը՝ «Բնակելի տարածությունների սեփականատերերը պետք է դրանք այնպես օգտագործեն, որպեսզի իրենց գործողություններով կարգավորված համակեցության սահմաններից դուրս եկող անհարմարություններ չառաջացնեն մնացած սեփականատերերի համարե: Հատկանշական է, որ գերմանական իրավական ակտերում չկա «կարգավորված համակեցության սահմաններիե որևէ սահմանում, մինչդեռ այդ սահմանները սովորույթի ուժով հայտնի են բոլորին:*

*Նմանատիպ դրույթներ նախատեսված են նաև Շվեյցարիայի, Կանադայի, Հոլանդիայի, Վրաստանի և Մոլդովայի քաղաքացիական օրենսգրքերի հարևանային հարաբերություններին վերաբերող կարգավորումներում:*

*Հետևաբար, անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «հարևանային իրավունք» անվանմամբ գլխում նախատեսել իրավունքի այս ինստիտուտին բնորոշ վերը նշված բովանդակության հատուկ սկզբունքներ:*

*Ներկա իրավիճակը և խնդիրները*

*ՀՀ օրենսդրությանը ծանոթ չեն «հարևան», «հարևանային հարաբերություններ», հարևանային իրավունք հասկացությունները:*

*Հարևանների շահերի պաշտպանությանն ուղղված որոշ նորմեր՝ տեղ են գտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, սակայն չի կարգավորում հարևանային հարաբերությունները որպես ինքնուրույն ինստիտուտ, և միայն հողամասով անցնելու համար սերվիտուտ սահմանելու վերաբերյալ, ինչպես նաև վարձակալի կողմից հարևանների իրավունքների և օրինական շահերի պարբերաբար խախտման դեպքում դատական կարգով բնակելի տարածության վարձակալության պայմանագրի լուծման վերաբերյալ դրույթներն են, որոնք որոշ չափով անդրադառնում են հարևանների շահերի պաշտպանությանը:*

*Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հարևանային իրավունքի ինստիտուտը կարգավորելու է ազդեցություն առաջացնող հողամասերի կամ այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց միջև ծագած հարաբերությունները, սահմանելու է, թե որ հողամասերն են «հարևանային», ինչ պարտականություններ ունեն հարևանները միմյանց նկատմամբ և այլն:*

*Հիշյալ նախագծով առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել հարևանների կողմից հարգանք ցուցաբերելու պարտականությունը, որի պարագայում հարևանը պարտավորվում է հանդուրժել հարևան անշարժ գույքից իր սեփականություն ներթափանցող ազդեցությունը, որը չի խոչընդոտում իր անշարժ գույքի օգտագործումը կամ այդ ազդեցությունը պայմանավորված է գույքի՝ տվյալ*

*տարածքին բնորոշ ձևով բնականոն օգտագործմամբ կամ այդպիսի ազդեցությունը աննշան է: Ազդեցությունն աննշան է, եթե այն համապատասխանում է, օրինակ սանիտարա-հիգիենիկ կամ բնապահպանական կանոններին կամ այլ նորմատիվ ակտերին: Այս դեպքում հարևանը չի կարող արգելել ազդեցության ներթափանցումը: Հարևանը չի կարող արգելել նաև այն դեպքում, երբ տվյալ ազդեցությունը պայմանավորված է գույքի (որտեղից ներթափանցում է ազդեցությունը) բնականոն օգտագործմամբ, որը բնորոշ է կոնկրետ այդ տարածքին: Իսկ այն դեպքում, երբ վերոգրյալ ազդեցությունը էական է, գերազանցում է տվյալ տարածքին բնորոշ ազդեցությունը և եթե հարևանը ստիպված է հանդուրժել այն, քանի որ այն վերացնելը մյուս հարևանի համար անհամաչափ մեծ ֆինանսական բեռ կարող է լինել, ապա հանդուրժելու ժամանակահատվածի համար հարևանը մյուս հարևանից կարող է պահանջել դրամական փոխհատուցում:*

*Այս կանոնները չեն բացառում վարչահիրավական հարաբերությունները, պատասխանատվությունը:*

*Մասնավորապես, նախագծով նախատեսվում է, որ հարևանը չի կարող փոխել ջրերի հոսքերի օգտագործումը այնպես, որ խաթարվի հարևան սեփականատիրոջ կողմից այդ հոսքերի բնականոն օգտագործումը : Բացի այդ նախագծով նախատեսվել է, որ տանիքը այնպես պետք է կառուցվի, որ ջուրը, սառույցը կամ ձյունը թափվեն սեփականատիրոջ հողամասի վրա:*

ՕՐԻՆԱԿ՝

*Նախագծով հստակեցվել է, որ հարևան հողամասի վրա ընկած ծառերի կամ թփերի պտուղները այդ հողամասի պտուղներն են:*

*Նախագծով անդրադարձ է կատարվել նաեւ այն դեպքերին, երբ հարևան սեփականատիրոջ ծառի կամ թփի արմատները կամ ճյուղերը ներթափանցում են մյուս հարևանի հողամաս: Այս դեպքում հարևանը իրավունք կունենա կտրել և իրեն վերցնել ճյուղերը այն դեպքում, երբ կծանուցի հարևանին այդ մասին և վերջինս որևիցե գործողություն չի կատարի այդ ուղղությամբ:*

*Նախագծով կարգավորվել են այն իրավիճակները, երբ հարևանները չեն կարող որոշել իրենց հողամասերը բաժանող ստույգ սահմանը: Այս դեպքում որոշիչ կլինի հարևանների կողմից փաստացի տիրապետումը, իսկ եթե հնարավոր չէ որոշել նաև փաստացի տիրապետումը, ապա յուրաքանչյուր հողամասին միացվում է վիճելի տարածքի հավասար մասը:*

*Հիշյալ նախագիծը, սահմանելով հարևանների կողմից հարգանք դրսևորելու սկզբունքը, ուղղված է որոշակիացնելու հարևանային հարաբերությունները և կարգավորելու հարևանների միջև ծագող վեճերը, որոնք չեն կարգավորվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ ինստիտուտներով և նորմերով: Այս հարաբերությունների յուրահատկությունն էլ պայմանավորում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առանձին կարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը:*

Ահա դուք անցել եք իրավաստեղծ այս բարդ գործընթացի բոլոր փուլերը, և հասել եք վերջին՝ ոչ պակաս կարևոր մասին.

## 3.14 Ինչպե՞ս ճիշտ ընտրել Ձեզ անհրաժեշտ օրենսդիրին

**Խմբակցությունն** ընտրելիս՝ ուսումնասիրե՛ք խմբակցության (կուսակցության) ծրագիրը, և առաջարկները ներկայացնելիս շեշտե՛ք, որ ձեր կողմից բարձրացվող հարցը խմբակցության ծրագրային դրույթներում ընդգրկված է, այդ հարցի կարևորությանը հղում է արվել կուսակցության նախընտրական դրույթներում և այլն: Առաջնորդվե՛ք Ձեր նախագծի և Ձեր ՀԿ շահառուների ռացիոնալ շահերով, քանի որ պարզապես կուսակցական կամ անհատական նախընտրությունները տվյալ դեպքում կարող են լավ խորհրդատու չլինել:

**Պատգամավորի** ընտրության դեպքում հաշվի առեք, թե ԱԺ ո՞ր մշտական հանձնաժողովի անդամ է այդ պատգամավորը, արդյո՞ք Ձեր կողմից բարձրացվող հարցը եղել է կամ գտնվում է նրա ուշադրության կենտրոնում, արդյո՞ք պատգամավորն ունի բավարար գրագիտություն և պատրաստվածություն՝ տվյալ խնդիրը պատշաճ ձևով հանձնաժողովին ներկայացնելու և քննարկման ժամանակ այն պաշտպանելու համար, արդյո՞ք բավարար ակտիվ է, որպեսզի հետևողականորեն առաջ տանի նախագիծը և դառնա Ձեր նախագծի «դեսպանը» խորհրդարանում:

Օրինագծի հաջող առաջընթացի համար մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր նախապայման է **ՁԼՄ-ների** գրագետ և ակտիվ ներգրավումը օրինագծի շուրջ կազմակերպվող քննարկումներում: Բավարար հետևողական եղեք, որպեսզի հնարավորինս մեծ քանակով լրատվամիջոցներ տեղեկացված լինեն Ձեր նախագծի մասին, հրավիրեք ասուլիս՝ նախագիծը մեկնաբանելու հա-

մար, նախապես պատրաստեք մատչելի և ամբողջական տեղեկատվություն պարունակող մամուլի հաղորդագրություններ, տեղեկագրեր, նախապատրաստեք Ձեր ՀԿ ներկայացուցիչներին՝ օրինագծի շուրջ լրագրողների կողմից հնարավոր հարցերին ճշգրիտ և հետաքրքիր պատասխանելու համար: Որքան մեծ է մամուլում և սոցիալական մեդիայում հետաքրքրությունը որևէ նախագծի շուրջ, այնքան այն ավելի մեծ հավակնություններ ունի ԱԺ-ում քննարկման արժանանալու:

Որպես մեկ այլ կարևոր «բոնուս»՝ փորձեք Ձեր օրինագծի քննարկումներին մասնակից դարձնել ՀՀ-ում գրանցված տարբեր **միջազգային կազմակերպությունների**, որոնք, իրենց մանդատի համաձայն, առնչություն ունեն Ձեր նախագծի կողմից շոշափվող թեմաների և խնդիրների շրջանակի հետ: Հրավիրեք նրանց ներկայացուցիչներին Ձեր կողմից կազմակերպվող քննարկումներին, հանդիպումներին, պատրաստեք նախագծի համառոտ նկարագրությունն անգլերեն, ուղարկեք այն այդ կազմակերպությունների՝ նախապես որոշված ցանկին: Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից դրական արձագանքները և գնահատականները նույնպես կմեծացնեն Ձեր նախագծի շանսերը:

**Գործընկերային ցանցի** ստեղծումը ևս կարևոր է. համագործակցեք այլ ՔՀԿ-ների հետ, որոնք համակարծիք են Ձեզ հետ՝ նախագծով առաջ քաշվող առաջարկների և փոփոխությունների շուրջ, ստացեք նրանց աջակցությունը՝ խրախուսական և աջակցության նամակների տեսքով: Լավ ստացված համագործակցության պարագայում շատ դրական են ընկալվում համատեղ

ասուլիսները, հայտարարությունները և այլն: Այսպիսով՝ հնարավորինս մեծացրեք հանրային ռեզոնանսը Ձեր նախաձեռնության շուրջ, որպեսզի նպաստեք նրա հետագա հաջողությանը:

Նշումների համար

Նշումների համար

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

Օրենսդրական նախագիծ կազմելու
գործնական հմտություններ

Տպագրվել է Թայմ թու պրինտ տպարանում
Չափը՝ 60*80 1/16: Ծավալը՝ 4.375 մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ: